

## ИСТОРИЯ

### Ռամկավարները և Հայկական հարցը (1917 հոկտեմբեր - 1921)

Մարգարյան Սուրեն Թ.

ս.գ.դ., պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող,  
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)

ORCID iD: 0009-0005-6171-9021

sargsyansuren@yandex.ru

ՀՏԳ՝ 327.5 (470+571, 477); EDN: ILRRNP;

DOI: 10.58587/18292437-2023.6-47

Հանգուցարաներ՝ կուսակցություն, ռամկավարներ, Հայկական հարց, պաշտոնաթերթ, ծրագիր, համագումար, նպատակ, համագործակցություն

### Рамкавары и Армянский вопрос (октябрь 1917-1921)

Саргсян Сурен Т.

д. и. н., профессор, ведущий научный сотрудник Института истории НАН РА (Ереван, РА)

**Аннотация.** История армянского вопроса о существовании и будущем армянского народа, достаточно хорошо изучена, однако в отношении традиционных партий почти ничего не сделано. В частности, никогда не было какого-либо обращения к партии Рамкавар и армянскому вопросу:

Политические убеждения партии стали принципами равенства, свободы, верховенства закона и национального улучшения жизни армянского народа и достижения права на достойную жизнь. Он выступал за защиту интересов армянства и постоянно преследовался турецкими властями. Вехой для него было то, что армянский вопрос возник исторически, а западное армянство долго ждало его решения, но безрезультатно, поскольку младотурецкое правительство не только проигнорировало его, но и, воспользовавшись случаем Первой мировой войны, совершило геноцид армянского народа. Разочарованные этим рамкавары с тех пор полагались на помощь России:

**Ключевые слова:** Партия, рамкавары, Армянский вопрос, официальная газета, программа, съезд, цель, сотрудничество

### Ramkavars and the Armenian question (October 1917-1921)

Sargsyan Suren T.

Doctor of Sciences in History, professor,  
Leading Researcher, at the NAS RA Institute of History (Yerevan, RA)

**Abstract.** The history of the "Armenian question" about the existence and future of the Armenian people has been studied quite well, but almost nothing has been done regarding the traditional parties: In particular, in 1908. In particular, there has never been any appeal to the Ramkavar party and the Armenian issue: The political beliefs of the party have become the principles of equality, freedom, the rule of law and the national improvement of the life of the Armenian people and the achievement of the right to a decent life: He advocated for the protection of the interests of the Armenians and was constantly persecuted by the Turkish authorities: The milestone for him was that the Armenian issue arose historically, and Western Armenians have been waiting for its solution for a long time, but to no avail, since the Young Turk government not only ignored it, but also, taking advantage of the First World War, committed the genocide of the Armenian people: Disappointed by this, the Ramkavars have since relied on Russia's help:

**Keywords:** party, ramkavary, Armenian question, official newspaper, program, congress, goal, cooperation

Հայկական հարցի արդարացի լուծման հեռանկարով մտահոգ ռամկավարները<sup>1</sup> ողջունեցին 1917 թ. ապրիլի 11-ին հիմնադրված Հայ ժողովրդական կուսակցությանը և հույս հայտնեցին, որ կկարողանան համագործակցել նրա հետ: Նրանք հայտարարում էին, որ Հայկական հարցը, հանդիսանալով միջազգային

դիվանագիտության խնդիր, կարող էր լուծում ստանալ միայն միջազգային վեհաժողովում, իսկ իրենք պետք է աշխատեին, որպեսզի հարցը լուծվեր «ըստ թուրքահայերի ցանկութեան» [5, էջ 45]: Ապրիլի 24-ին իշխան Լվովին ուղղված նրանց հեռագրում նշվում էր, որ Հայաստանի սպազա բախտը կախված է ռուսական հեղափոխության ելքից, իսկ ռամկավարներն իրենց աջակցությունն ու գորակցությունն են հայտնում վերաձևվող Ռուսաստանի ամրապնդման բոլոր կողմնակիցներին:

<sup>1</sup> Մեր նախորդ հոդվածում ներկայացրել ենք ռամկավարների վերաբերմունքը Հայկական հարցի նկատմամբ նրանց հիմնադրումից մինչև Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղաշրջումն ընկած ժամանակաշրջանում: Ներկա հոդվածը նախորդի օրգանական շարունակությունն է:

\* \* \*

1917 թ., 25-ին բոլշևիկները զավթեցին իշխանությունը և սկսեցին անջատ բանակցություններ վարել Գերմանիայի հետ: 1918 թ. մարտի 3-ին նրանք կնքեցին Բրեստի պայմանագիրը, որով թուրքերը վերագրավեցին Արևմտյան Հայաստանը և Կարսի ու Բաթումի շրջանները: Ռամկավարներին լրջորեն անհանգստացնում էին հատկապես բոլշևիկների հակապատերազմական կոչերը, որոնք, փաստորեն, հանգեցնում էին բանակի քայքայմանը [11, մայիսի 7]: 1918 թ. գարնանը թուրքական բանակի արշավանքի և Արևմտյան Հայաստանի վերագրավման հետևանքով Հայոց ազգային խորհրդի գործունեությունը կազմալուծվել էր: Դրա համար էլ ռամկավարներն իրենց մամուլի էջերում շարունակում էին քննադատել բոլշևիկներին:

«Ազգը» դատապարտում էր բոլշևիկներին, որոնք իրենց քարոզչությամբ կազմալուծեցին ինչպես արևմտյան, այնպես էլ Կովկասյան ճակատի ռուսական զորքերը: Դատապարտում էր նաև նրանց առաջ քաշած «իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու» սկզբունքը: Ռամկավարները դատապարտում էին «հուղայական խաղաղություն» անվանված Բրեստի պայմանագիրը, որով բոլշևիկները Գերմանիային հանձնեցին ոչ միայն իրենց հողերի զգալի մասը և ազատությունը, այլև հայ ժողովրդին և «պետք չիկա ըսելու, թե ինչ պիտի պատահի հայ ժողովրդին: Տարակույս չիկա, որ հայ ազգի բեկորներն ալ սուրե պիտի անցուին» [11, մարտի 9]:

Մուղրոսի զինադադարից հետո ռամկավարների պաշտոնաթերթ «Նոր Կեանքը», նկարագրելով Թուրքիայի կենտրոնական շրջաններում Մուստաֆա Բեմալի գլխավորած թուրք ազգայնականների խժոժությունները, դատապարտում էր թուրքերին, այն բանի համար, որ «յոյրքի չարագործությունները նորություն չեն» [12, նոյեմբերի 12]: «Նոր Կեանքը», դատապարտում է նաև դաշնակիցներին, որոնք իրենց «հոռի ընթացքով ուղղակի կամ անուղղակի քաջաբերեցին գայն ու կջայերեն տակավին» [12, նոյեմբերի 12]: Թերթը գայրություն էր գրում, որ ամեն ինչ նույն հարթությունում է և, որն ամենասարսափելին է, հայության հրաշքով փրկված բեկորներն էլ են դրվում պատմության զոհասեղանին ու զոհության կոչ անում «հայոց բոլոր մարդերուն»:  
Հիրավի կանխատեսելու նախանձելի կարողություն:

1919 թ. մարտի 24-ին ռամկավարները Երևանում «Հայաստանի Ձայն» անունով սկսում են վերահրատարակել կուսակցության պաշտոնաթերթ «Վան-Տոսպը», որի նպատակն էր պաշտպանել Միացյալ Հայաստանի «խաբիսիքը»: Այն կոչ էր անում ընդունել Արևմտյան

Հայաստանի թեզը, որպեսզի «Ռուսաստանը և ռուսական հարցը պատճառ չդառնա դաշնակից պետություններուն քով թրքահայ հարցին լուծումը հետաձգելուն» [13, սեպտեմբերի 3]:

Աշխարհամարտում պարտված Թուրքիան 1918 թ. հոկտեմբերի 30-ի Մուղրոսի զինադադարով կապիտուլյացիայի ենթարկվեց: 1919 թ. հունվարին տեղի ունենալիք Փարիզի խաղաղության վեհաժողովում հայ ժողովրդի միասնական կամքն արտահայտելու և քաղաքական շահերը պաշտպանելու նպատակով՝ Ազգային պատվիրակությունը ծրագրում է Փարիզում հրավիրել Ազգային համագումար և այդ մասին հրապարակում է «Ամբողջական Հայաստանի՝ Կիլիկիայի հետ միասին, անկախության մասին» հայտարարություն, որում ասվում էր, որ Հայաստանի անկախությունը պատկերացվում էր «համաձայնական պետություններու և Միացյալ Նահանգներու հովանավորության տակ կամ Ազգերու Դաշնակցության, երբ ան կազմվի» [7, էջ 283]: Ռամկավարներն իրենց մասնակցությունը համագումարին բերեցին մի քանի պատգամավորներով. Եգիպտոսից ընտրվեց Վահան Թեքեյանը, Կ.Պոլսից՝ պրոֆ. Գ.Տեր-Հակոբյանը, Ամերիկայից՝ Հովհաննես խան Մասեհյանը, Պրոֆ. Կարապետ Թումայանը, Երվանդ Աղաթոն բեյը, Միհրան Տամատյանը [7, էջ 284]:

Նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը կամ ինչպես իրենք էին անվանում «Արարատյան Հանրապետությունը», որը «պատերազմի պարագայական քաղաքականության հետևանք է, որը չէ կարող իրավասություն ունենալ և նույնանալ թուրքահայ հարցին հետ» [8, էջ 390], ռամկավարները համարում էին անցումային փուլ հայոց պետականության ստեղծման ճանապարհին, քանի որ այն չէր ներառում Հայաստանի մեծագույն մասը: Սրանից էլ նրանք եզրակացնում էին, որ այդպիսի հանրապետությունն իրավասու չէ առանձին պատվիրակություն ստեղծելու և իր անունից բարձրացնելու ու միջազգային դիվանագիտական առյուծկալներում պաշտպանելու Հայկական հարցը: Մինևույն ժամանակ, ռամկավարները գտնում էին, որ նորաստեղծ հանրապետությունը, գտնվելով Ռուսաստանի ազդեցության ոլորտում, վաղ թե ուշ պիտի գրավվեր նրա կողմից, հետևաբար այն չէր կարող համարվել ապագա Միացյալ և Ազատ Հայաստանի կորիզը: Առաջնորդվելով այս մտայնությամբ, ռամկավարները պաշտպանում էին Պողոս Նուբարի պատվիրակությանը, հրահանգներ տալիս և զինում նրան անհրաժեշտ փաստաթղթերով:

Պետք է արձանագրենք սակայն, որ ռամկավարների դատողությունները միանշանակ իրատեսական չի կարելի համարել: Ինչպես իրավացիորեն գրում է այդ հարցերին քաջատեղյակ Գ. Գալոյանը՝ ռամկավարներն

աներկբայորեն պաշտպանելով Պողոս Նուբար փաշային ու նրա պատվիրակության տեսակետները, հանդես էին բերում հատվածական մտածողություն, որն այնքան էլ ճիշտ չէր և չէր նպաստում պատվիրակությունների առաքելությունների իրականացմանը [2, էջ 90]:

Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը ելնում էր այն տեսլականից, որ Հանրապետության գոյությունը իրողություն էր, այնտեղ ապրում էր մեկ միլիոն ժողովուրդ, Երևանում կար խորհրդարան, կառավարություն, բանակ, մինչդեռ Թուրքահայաստանն ամայի էր, գրեթե՝ անմարդաբնակ: «Հետևաբար անհրաժեշտ էր ազգային բոլոր ուժերը կենտրոնացնել Հայաստանի Հանրապետության վրա, իբրև հայկական պետության կորիզի, և Հայկական հարցի լուծումը դնել Հայաստանի երկու հատվածների միացման ձևով», - եզրակացնում էր Գ. Գալոյանը [7, էջ 289]:

1919 թ. ապրիլի 2-ին կազմվում է «Ամբողջական Հայաստանի պատվիրակությունը», որը Հայաստանի Հանրապետության պաշտոնական պատվիրակության հետ միացած, ամբողջ հայության անունից պիտի բանակցեր դաշնակից պետությունների պատվիրակությունների հետ, մինչև Ամբողջական Հայաստանի միացյալ կառավարության կազմավորումը: 1919 թ. փետրվարի 12-ին Ազգային և Հայաստանի Հանրապետության պատվիրակությունների կողմից մշակվել ու հաշտության վեհաժողովին էր ներկայացվել հիշատակագիր, որն, ըստ էության, պարունակում էր բոլոր հայերի պահանջները:

1919 թ. մայիսի 28-ին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հրապարակվեց «Միացյալ և Անկախ Հայաստանի» հայտարարությունը: Այս ակտը միանշանակ չընդունվեց ազգային բոլոր ուժերի և կուսակցությունների կողմից: «Նոր կեանքը», խոսելով վերոհիշյալ ակտի մասին, մանրամասնում էր, որ Ամբողջական Հայաստանի անունից խոսելու իրավունք ունի միայն Ամենայն հայոց կաթողիկոսի կողմից հաստատված և դաշնակից պետությունների կողմից ճանաչված Ազգային պատվիրակությունը: Միևնույն ժամանակ, ըստ պարբերականի՝ քանի դեռ Մեծ Հայքի ու Կիլիկիայի վիճակն անկայուն էր ու քաղաքականապես անորոշ և հստակ էլ չէր, թե ինչ էր սպասվում ապագայում, ուստի Ամբողջական Հայաստանի կառավարության կազմելը ճիշտ չէր և աննպատակահարմար: Բացի այդ Միացյալ Հայաստանի կազմությունը կախում ուներ նաև հովանավոր պետության որդեգրած դիրքորոշումից, իսկ այդ պետությունը որն էր լինելու, դեռևս որոշված չէր: Հայտնի չէին նաև ապագա Հայաստանի սահմանները: Ահա այս պատճառաբանությամբ Ամերիկայի ռամկավարները

«Երևանի կառավարության հայտարարությունը համարում էին անհիմք և արժեզուրկ» [12, օգոստոսի 16]: Ամերիկայի ռամկավարներն արտահայտում էին նաև իրենց վերաբերմունքը հայ-ռուս-թուրքական հարաբերությունների նկատմամբ: «Պետք է միանգամ ընդմիշտ խոստովանել, թե մենք թշնամի ենք միայն ցարական Ռուսիո բռնապետական վարչության, բայց միշտ բարեկամ եղած ենք ազատական ռուս վարիչներու ծրագրին ու գործունեության» [12, հուլիսի 30], - գրում էր «Նոր կեանքը» և երազում տեսնել Հայաստանին սահմանակից բարգավաճ ու հզոր Ռուսաստան, որը «միշտ թշնամի եղած է մեր դահին թուրքերու հայահալած քաղաքականություն» [12, հուլիսի 30]:

Հստակ է, որ ռամկավարները ցանկալին ընդունում էին իրականության տեղ, որովհետև ռուս-թուրքական հակամարտությունների պատճառը բնավ էլ պայմանավորված չեն եղել թուրքերի հայահալած քաղաքականությամբ, ինչպես նշում էր թերթը: Այն ուներ օբյեկտիվ պատճառներ՝ կապված Ռուսաստանի և Օսմանյան կայսրության աշխարհաքաղաքական շահերի հետ: Ռամկավարների այս նայիվ պատկերացմամբ էր պայմանավորված նրանց այն հույսը, թե դեմոկրատական Ռուսաստանի կառավարողներն ի վերջո կգնահատեն Ռուսաստանի հանդեպ հայերի նվիրվածությունը և ոչ միայն չեն արգելի, այլև նույնիսկ կատարեն Միացյալ Հայաստանի կազմությանը: Իսկ Թուրքիայի կողմից նորաստեղծ Հայաստանի Հանրապետության ճանաչման կապակցությամբ ռամկավարները հայտարարում էին, որ չեն հավատում Թուրքիայի այդ խորամանկ ու կեղծ քայլին, ընդհակառակը, գտնում էին, որ Թուրքիան իրականում դեմ է ցանկացած հայկական պետության կազմավորմանը, պարզապես «Արարատեան Հանրապետության հռչակումը ընդունել են իբրև փոքրագույն չարիք» [12, հուլիսի 30], առաջնորդվելով այն մտայնությամբ, որ այդ «սահմանափակ հողամասը թայթարների, վրացիների ու մանավանդ ռուսների մրցակցության ընդմեջ, բոլորովին անընդունակ է բարգավաճ երկիր մը լինելու և ազատ ծովերէ գուրկ այդ երկիրը ուշ կամ կանուխ ենթակա է թուրք, թայթար կամ բռնապետական ռուս կառավարության ճանկին մեջ իյնալու» [12, հուլիսի 30]:

Փաստորեն, ռամկավարների մոտ գերիշխող էր այն տեսակետը, որ Հայաստանի հանրապետությունն այդ սահմանների մեջ չէր կարող հեռանկար ունենալ և դատապարտված էր նշված երկրներից որևէ մեկի կողմից կլանվելու: Ահա այդ պատճառով նրանք Արարտյան հանրապետությունը դիտում էին որպես ապագա Միացյալ Հայաստանի մի մասը միայն, այն Հայաստանի, որը, ռամկավարների համոզմամբ, պիտի բաղկացած լիներ նաև

Արևմտյան Հայաստանից ու Կիլիկիայից և ելք ունենար դեպի ծով:

1920 թ. հունվարի 19-ին դաշնակիցների գերագույն խորհուրդը փաստացի ճանաչում է Հայաստանի Հանրապետության գոյությունը: Այս հանգամանքը մեծացնում է Հայաստանի Հանրապետության կշիռը քաղաքական ասպարեզում:

Ռամկավարներն այս շրջանում շատ ջանքեր գործադրեցին, որպեսզի ԱՄՆ-ի սենատն ընդունի Հայաստանի մանդատը, սակայն դա չիրականացավ: 1920 թ. մայիսի վերջերին ԱՄՆ-ի սենատը քննարկեց այդ հարցը և 23 կողմ 52 դեմ ձայների քանակով մերժեց այն [8, էջ 444]: Դրանում ռամկավարները մեղադրեցին Հայաստանի կառավարությանը և հրաժարվեցին մասնակցել 1920 թ. մայիսի 28-ի տոնակատարություններին:

1920 թ. սեպտեմբերի 26-ից դեկտեմբերի 3-ը Կ. Պոլսում տեղի ունեցավ կուսակցության Գ ընդհանուր պատգամավորական ժողովը, որը պաշտոնապես որոշեց ՀՍՌԿ անունը փոխել և դարձնել Հայ ռամկավար կուսակցություն (այսուհետ՝ ՀՌԿ): ՀՌԿ-ի ծրագիրը կուսակցության նպատակ էր հայտարարում. «Այսպիսով և պահպանել Միացյալ Հայաստանի անկախությունը, աշխատել Հայաստանի քաղաքական, տնտեսական և հոգևոր զարգացման համար, ամրապնդել կապերը Հայաստանի և արտասահմանի հայության միջև, քաջակերել ներգաղթը» [1.2, էջ 1]: Քննարկվում է նաև Ազգային պատվիրակության նկատմամբ վերաբերմունքի հարցը: Նշվում էր, որ Սևրի դաշնագրի՝ Հայաստանին վերաբերող մասի անորոշ տրամադրությունները և Հայաստանի Հանրապետության ու ամբողջ Արևելքի քաղաքական խառնաշփոթ դրությունը նկատի ունենալով, անհրաժեշտ է հանուն «գործահայ ժողովրդին և ի մասնավորի հանուն չազատագրված Հայաստանի, հետապնդել անոնց դրությունն ինդիքը և կենսական շահերը, նկատի ունենալով Կիլիկիո առանձնահատուկ կարևորությունը, որ անհրաժեշտ կրնձայե դաշնակից պետությանը և մասնավորապես ֆրանսիական կառավարության հետ մոտիկ հարաբերությանը և բանակցությանը մշակումը» [1.2, էջ 1]:

Ռամկավար նշանավոր գործիչ Լևոն Մկրտչյանը նույն թվականի դեկտեմբերի 15-ին Ազգերի լիգային ներկայացրեց Հիշատակագիր, որում համառոտ տրված էր Հայկական հարցի ծագումն ու էությունը և հույս հայտնում, որ «համաձայն Ազգերու ընկերակցության կանոնագրին 22 հոդվածին տրամադրությանը և ոգիին» [1.2, էջ 1], Հայաստանը պետք է ենթարկվի որևէ պետության պաշտպանության: Ընդգծվում էր այն միտքը, որ ՀՌԿ-ն ոչ թե Երևանի հանրապետության համար է հոգատարություն խնդրում, այլ այն «հողամասերուն համար, որոնք

Սևրի դաշնագրին տրամադրությանը և ԱՄՆ Նախագահին իրավարարական վճռին համաձայն պիտի անջատվին թրքական նախկին պետությունէն, կազմելու համար հայ պետութիւնը» [9, հունվարի 27]: Հիշատակագիրը համոզմունք էր հայտնում, որ ուշ թե շուտ Ռուսաստանում հաստատվելու էին դեմոկրատական-սահմանադրական կարգեր և կառավարություն, որը կհարգի նախկին ռուսական կայսրության կազմի մեջ մտնող ժողովուրդների իրավունքները և «Երևանի հանրապետության հողամասերը օր մը պիտի կցվին Սևրի դաշնագրով ստեղծված Հայաստանին, որուն կորիզը կկազմեն թուրք կայսրության հայ գավառները: Ահա այս ոգով է, որ Ազգերու ընկերակցութիւնը Հայաստանի օգնութեան պարտի հասնի» [9, հունվարի 27]: 1920 թ. դեկտեմբերի 30-ին Լ. Մկրտչյանը Ազգերի լիգայի ժողովի նախագահի անունից ստանում է պատասխան հեռագիր, որտեղ հայտնվում էր, որ ժողովը լիգայի խորհրդին խնդրել է կազմել հանձնաժողով, որը պիտի շարունակի Հայկական հարցի հանձնախմբի կողմից սկսված աշխատանքը և որ հանձնախմբի իրավասությունը պիտի տարածվի ոչ միայն նախկին Արևելյան Հայաստանի, այլև ողջ հայկական հողերի վրա [9, հունվարի 27]:

Համագումարի ավարտից անմիջապես հետո ՀՌԿ Կենտրոնական վարչությունը 1920 թ. դեկտեմբերի 13-ին շրջանակներին է դիմում թիվ 3 շրջաբերականով, որում ասվում էր. «Դժբախտաբար Հայաստանի աղետաբեր դեպքերը ավելի կնճռոտեցին կացութիւնը և չենք գիտեր, թե ինչ արդյունք պիտի ունենան կատարված աշխատությունները թե հայասերներու լիգային և թե Ազգաց ընկերակցութեան մեջ: Հանրի անկման և Կարսի գրավման առթիվ ժողովը դիմումներ հղեց Ազգերու լիգային Պոլսո քարձր կոմիտեներուն, որոնցմէ ստացաւ պատշաճ պատասխաններ» [1.2, էջ 26]: Նշվում էր նաև, որ Թուրքիան օգտագործում է Ռուսաստանի և Անտանտի միջև գոյություն ունեցող հակասությունները հօգուտ իր քաղաքական նպատակների և այս պայմաններում հայերը գործնական օգնություն կարող են սկսնկալել միայն Ռուսաստանից: Ընդգծելով, որ ՀՌԿ-ն ստեղծված ճգնաժամային կացության մեջ իր ուշադրությունը հիմնականում կենտրոնացրել է «հայ ժողովրդի ֆիզիկական և անոր քաղաքական իրավունքներու պաշտպանութեան շուրջ», կենտրոնական վարչությունը հրահանգում էր բոլոր շրջանային վարչություններին երկրորդական նշանակություն տալ «Խորհրդային Ռուսաստանի հեղափոխութեան, Հայաստանի ներքին ընկերային կարգերու վրա առաջ բերած ազդեցութիւններուն» [1.2, էջ 33]:

1920 թ. դեկտեմբերի 26-ին ՀՌԿ Արևմտյան Եվրոպայի շրջանային վարչությանն ուղղված թիվ 4 շրջաբերականում ուղղակիորեն նշված էր.

«Հայաստանը իր արտաքին քաղաքականության վարչությունը Ռուսաստանին կհանձնե» [1.2, էջ 36]: Որպես ապացույց վկայակոչվում էր Խորհրդային Ադրբեջանի վիճակը, Խորհրդային Ռուսաստանի քաղաքական ծրագրերը և «Հայաստանի անկախության մասին որևէ ակնարկ չբովանդակող նոր կառավարության ողջունի հեռագրերը» [1.2, էջ 36]: Ծրջաբերականում նշվում էր, որ նախկին Ռուսական կայսրության սահմաններում ստեղծված Հայաստանի Հանրապետությունը, փաստորեն, գրկված է իրական անկախությունից: Այնուհետև շեշտվում էին, որ եթե նույնիսկ «Ռուսահայաստանը կորցված համարենք, ապա պետք է շարունակենք առաջ տանել Հայկական հարցի վերաբերմամբ մեր ջանքերը» [1.2, էջ 36]:

Ելնելով ՀՌԿ 3-րդ համագումարի որոշումներից, Կենտրոնական վարչությունը Հայկական հարցին իր վերաբերմունքը բանաձևեց հետևյալ կերպ. «Հայ Ռամկավար կուսակցության իրենց Միացեալ և Անկախ Հայաստանն է: Սակայն հեղափոխական Ռուսաստանի վերաբերմունքը Հայաստանի ապագայի հանդեպ չի է անորոշությանը և անակնկալներով: Ներկայիս ՀՀ ղեկը իր ձեռքն ունեցող հայ խորհրդային կառավարությունը նույնպես ճշտած չէ իր վերաբերմունքը Սևրի դաշնագրի վերաբերեալ կամ Միացեալ և Անկախ Հայաստանի մը իրականացման մասին» [1.3, էջեր 7-8]: Եվ քանի որ կուսակցությունը չէր հրաժարվում Միացյալ և Անկախ Հայաստանի պահանջից, հետևաբար նրա շրջանային վարչություններն իրենց մամուլով պետք է պաշտպանեին այդ գիծը: Կենտրոնական վարչության այս որոշումը 1921 թ. հունվարի 24-ին թիվ 7 շրջաբերականով հաղորդվում է բոլոր շրջանային վարչություններին: Միաժամանակ նշվում էր, որ ընդունված բանաձևը հրատարակության համար չէ [1.2, էջ 37]:

1921 թ. հունվարի 14-ին Կ. Պոլսից Արտակ Դարբինյանը նամակ է ուղարկում Հայ Ռամկավար կուսակցության Հայաստանի խորհրդին՝ արևմտահայերի վիճակի և կուսակցության Հայաստանի խորհրդի բռնելիք քաղաքական գծի մասին: Այստեղ խոսելով արևմտահայերի մասին, Դարբինյանն ընդգծում էր այն հանգամանքը, որ նրանք (արևմտահայերը-Ս.Ս.) չեն հրաժարվել հայրենիք վերադառնալու իրենց իրավունքից, որը ձեռք են բերել միլիոնավոր զոհերի գնով: Նշվում էր, որ արևմտահայությունն անհրաժեշտ էր համարում դաշնակիցների կողմից ճանաչված Ազգային պատվիրակության միջոցով հետապնդել Արևմտահայաստանի խնդիրը: Իսկ Հայաստանի նոր կառավարության վարած քաղաքական կուրսի մասին, Ա. Դարբինյանը գրում էր. «Հայաստանի նոր կառավարության ղեկերային ծրագիրները մենք համարած ենք անմարտելի մեր ժողովրդի համար և

անհրազորձելի մեր հայրենիքի նման միջավայրի մը մեջ, բայց քանի որ դեպքերի ընթացքում այսօր Հայաստանի մեջ կտիրէ խորհրդային վարչաձեռք և ստոր ջատագով կուսակցությունը՝ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունը իր ձեռքն է առել կառավարության ղեկը, պետք է թողուլ, որ նա առանց ներքին ցուցումներու գործադրե այն, ինչ որ Հայաստանի տվեալ պայմանները հնարավորություն կը տան» [1.1, էջեր 1-2]:

Ընդգծենք, որ ռամկավարները Հայաստանում փետրվարյան դեպքերի նկատմամբ բացասական վերաբերմունք դրսևորեցին, դրանք համարեցին ավելորդ եղբայրասպան կռիվներ, որոնք, նրանց կարծիքով, միայն նոր աղետներ բերեցին բազմաչարքար հայ ժողովրդին: Հատկանշական է, որ ռամկավարների պաշտոնաթերթ «Ապագան», խոսելով փետրվարյան ելույթի պատճառների մասին, կարողանում էր վեր կանգնել նեղ կուսակցականությունից և չէր բավարարվում միայն կողմերից որևէ մեկին քննադատելով, այլ փաստերով ցույց էր տալիս, որ նորահաստատ բոլշևիկյան իշխանությունն իր վարած քաղաքականությամբ փաստորեն պատճառ դարձավ ժողովրդական նոր հուզումի [10, մարտի 12]:

Արտահայտելով ՌԱ կուսակցության դիրքորոշումը՝ Դարբինյանը նամակով դիմում է Հայաստանի նոր կառավարությունը և նշում, որ զենքի ուժով հնարավոր չէ լուծել Արևմտահայաստանի հարցը, իսկ իրենք էլ չէին հավատում, թե Ռուսաստանը կլուծեր այն, որովհետև «վերջին իրադարձությունները ցույց կուտան, որ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը չի հետևելու Միացեալ և Անկախ Հայաստանի խնդրի իրականացմանը» [1.1, էջ 2]: Դրա հետ մեկտեղ Դարբինյանը ցույց էր տալիս, որ քեմալականներն իրենց հերթին ոչ միայն «Տանկահայաստանէն հրաժարվելու մտադիր չեն, այլ նույնիսկ դեկտեմբերի 2-ի դաշնագրեն ալ ձեռք քաշելու միտք չունին» [1.1, էջ 2]: Նամակի վերջում Դարբինյանը հանգում էր հետևյալ եզրակացության. «Այս ծանրակշիռ հանգամանքները նույնպես կթելադրեն մեզ Տանկահայաստանի ազատագրության հոյսը չկասել միայն Հայաստանի նոր կառավարության բարոյական ջանքերու հետ և հարկադրել նրան, որ ճզմուի իր ուժերէն վեր եղող բեռան տակ: Այս տեսակետն է, որ կթելադրէ արտասահմանի հայությանը չհրաժարուել Սևրի դաշնագրով կամ անկէ դուրս Վերսալի դաշնագրի տված սկզբունքով պահանջել Տանկահայաստանի ստեղծում» [1.1, էջ 3]:

Ըստ էության, Մոսկվայի պայմանագրով խորհրդային իշխանությունը խաչ քաշեց Հայկական հարցի վրա [4, էջ 115]: Սակայն իրենց դիվանագիտական գործունեությունը շարունակում էին Ազգային և Հայաստանի նախկին հանրապետության պատվիրակություն-

ները: Ռամկավարները, որոնք պաշտպանում էին Պողոս Նուբարի ղեկավարած պատվիրակությանը, չնայած օտարի վրա հույս չդնելու իրենց հայտարարություններին, իրականում Եվրոպայից օգնության հույսեր էին փայփայում: Եվ պատահական չէր, որ 1921 թ. փետրվարի 19-ի «Ապագայի», «Հայկական հարցը և Լոնդոնի խորհրդաժողովը» խորագրով խմբագրականում ռամկավարները համոզմունք էին հայտնում, որ Լոնդոնում բացվելիք կոնֆերանսում կքննարկվի նաև Հայկական հարցը: «*Լոնդոնի ժողովէն մենք կապասենք, որ Հայկական հարցին տա այն նշանակությունը, որուն արժանի կը ընէ Դաշնակիցներուն դատին համար հայ ժողովրդին անհուն գոհաբերությունը*» [10, փետրվարի 19]: Այնուհետև ասվում էր, որ Լոնդոնի կոնֆերանսից ակնկալում են Արևմտյան Հայաստանի չորս նահանգների ազատագրումը թուրքերից, որտեղ կկարողանային պատսպարվել հայ գաղթականները: Միևնույն ժամանակ, ռամկավարները հույս ունեին, որ Լոնդոնի խորհրդաժողովը չի անտեսի կիլիկիահայությանը, իսկ ֆրանսիական կողմը «*խղճի պարտք մը պիտի համարէ կարելի բոլոր սպահովությունները ձեռք բերել Կիլիկիո հայ ժողովրդին գոյությունը համար*» [10, փետրվարի 26]:

Հայկական պատվիրակությունները մասնակցեցին 1921 թ. փետրվարի 21-ից մարտի 14-ը Լոնդոնում տեղի ունեցած մեծ տերությունների կոնֆերանսին: Իրենց դիրքորոշումը ճշտելու նպատակով ռամկավարները Պոլսում խորհրդակցություն են անցկացնում, որին հրավիրում են նաև Ազատական կուսակցության կենտրոնական վարչությանը և ՀԺԿ-ի կողմից լիազորված ներկայացուցիչ պրոֆ. Ա. Աղաջանյանը: Խորհրդակցության արդյունքում մասնակիցները հանգում են այն հետևությունը, որ Պ. Նուբարի պատվիրակությունը պետք է պաշտպանի Սևրի դաշնագրով ճանաչված Հայաստանի քաղաքական իրավունքները: Այնուհետև, փետրվարի 24-ին հեռագիր են ուղարկում Լոնդոն՝ Պ. Նուբարին, ուր շեշտում էին, որ իրենք Հայաստանի գոյությունն անհնարին են համարում առանց սևծովյա եզերքի Տրապիզոն նավահանգստով և ԱՄՆ-ի կողմից Հայաստանի մանդատի ընդունման: Ռամկավարները պահանջում էին Նուբարից, որպեսզի վերջինս հետամուտ լինի անպայման Հայաստանի սահմանների մեջ նեառելու Էրզրումն ու Տրապիզոնը: Միաժամանակ խնդրում էին առաջ մղել նաև Կիլիկիայի հարցը [1.3, էջ 23]:

Դեռ կոնֆերանսի նախօրյակին Ամերիկայի ռամկավարները գրում էին, որ Անկախ Հայաստանի կորիզը պետք է «*լլլա ոչ թե Ռուսական Հայաստանը այլ Թուրքահայաստանը*» [9, հունվարի 21]: Այդ նույն ոգով Լոնդոնում Պ. Նուբարը պնդում էր, որ պետք է իրագործվի

Սևրի պայմանագրով Հայկական հարցի մասին տրված որոշումը, շեշտելով, որ Կովկասյան Հայաստանի անցումը ռուսական տիրապետության տակ չի կարող արգելք լինել Արևմտյան Հայաստանի վերաբերյալ Սևրի դաշնագրի որոշումների իրագործմանը [3, էջ 447]: Թուրքական պատվիրակությունը Լոնդոնում նույնպես դրեց առավելագույն պահանջներ, որոնց թվում էին Կիլիկիայի վերադարձը և Ալեքսանդրապոլի պայմանագրի ճանաչումը: Ինչևէ, Լոնդոնի կոնֆերանսը որևէ համաձայնության չհանգեց Հայկական հարցի կապակցությամբ: Դաշնակիցները տարբեր պատճառաբանություններով հրաժարվեցին Հայկական հարցին դրական լուծում տալուց, փաստորեն, հրաժարվելով Սևրի պայմանագրից: Կոնֆերանսում նրանք առաջարկեցին Թուրքիայի արևելյան նահանգներում Հայկական «Ազգային օջախի» ստեղծման մշուշապատ, ոչինչ չստող և ոչ մեկին ոչինչ չպարտադրող գաղափարը, որից շուտով քեմալականները պիտի հրաժարվեին: 1921 թ. հունիսի 10-ին Փարիզում Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի նախկին հանրապետությունների ներկայացուցիչները ստորագրում են «դաշինք համագործակցության վերաբերյալ»: Այն ընդհանրապես ուղղված էր Խորհրդային Ռուսաստանի դեմ: Ռամկավարներին անհանգստացնում էր հատկապես այդ դաշինքի 7-րդ կետը, որով «Հ նախկին կառավարության ներկայացուցիչ Ավ. Ահարոնյանն ընդունում էր, որ Միացյալ Հայաստանի սահմանը պետք է լիներ ռուս-թուրքական 1914 թ. սահմանագիծը և դրանով փաստորեն հրաժարվում էր Արևմտյան Հայաստանից» [3, էջ 492]: Ռամկավարները վրդովմունքով հանդես եկան այդ համաձայնագրի դեմ, որով «*Ահարոնյանը հրաժարած էր թրքական Հայաստանէն*» [3, էջ 402]:

Կուսակցության կենտրոնական վարչությունը 1921 թ. հունիսի 25-ի շրջաբերականով հայտնում էր իր կառույցներին. «*Անկախ ընկերային հարցերէ, որոնք ինչքան ալ ժամանակատր բնոյթ ունենան, հայերու նախաձեռնութեամբ չէ, որ պիտի լուծուի, ամեն հայի պարտքն է օգնել Հայաստանի տնտեսական վերականգնումին և ամոքել անոր ներկայիս անսահմանափակ թշվառութեանը*» [1.4, էջ 36]: Ռամկավարները կոչ են անում Սփյուռքի հայությանը անտեսել Հայաստանի քաղաքական կարգերը և օգնության ձեռք մեկնել սովահար Հայաստանի ժողովրդին:

Դեռևս 1918 թ. սկսված մերձեցման արդյունքում Հայ Ազատական և Ռամկավար կուսակցությունները միավորվում են և 1921 թ. հոկտեմբերի 1-ին Կ. Պոլսում հռչակում նոր՝ Ռամկավար Ազատական կուսակցության ծնունդը: Այն նոր որակ էր հայ քաղաքական

կյանքում և նոր հիմքերի վրա դրեց ու շարունակեց իր անգիջում պայքարը Հայկական հարցի դրական լուծման համար, ինչին հետամուտ է նաև մեր օրերում:

Այսպիսով՝ հայ ռամկավարները՝ լինելով լինելով տեղացիներ և լավ ճանաչելով թշնամուն, Հայկական հարցի նկատմամբ հանդես էին բերում զգուշավոր և հավասարակշռված մոտեցումներ: Դեմ լինելով կարուկ, առավել ևս ցուցադրական գործելակերպին, նրանք եղան և մնացին ինքնապաշտպանության շատագուվներ: Ռամկավարները ողջունեցին փետրվարյան հեղափոխությունը, որովհետև իրատեսորեն հավատացած էին, որ վերջնական կործանումից հայությանը կարող էր փրկել միայն ժողովրդավար Ռուսաստանը: Հետագայում ևս՝ չընդունելով հանդերձ բոլշևիկների բռնի գործելակերպն ու գաղափարական դոգմատիզմը, ռամկավարները շարունակում էին հույսեր կապել Ռուսաստանի հետ և կոչ էին անում համայն հայությանը՝ բոլոր միջոցներով սատարել Հայաստանին ու հայաստանաբնակ հայությանը:

**Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ**

1. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)
  - 1.1. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 5:
  - 1.2. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 47:
  - 1.3. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 49:
  - 1.4. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 50:
2. **Գալոյան Գ.**, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ.: – Եր., 1999:
3. **Դարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն: Յուշեր 1890 Էն 1940: – Եր., 2003:
4. **Զոհրաբյան Է. Ա.**, 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները: – Եր., 1997:
5. **Ղազարեան Վ.**, Համառոտ պատմութիւն ՌԱԿ-ի: – Պէրոյթ, 1978:
6. **Սարգսյան Ս.**, Արևելահայ ռամկավար մամուլը 1918-1920 թթ.: – Եր., 1993:
7. **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետությունը: – Եր., 1993:
8. **Ճիգմենճեան Մ. Գ.**, Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց, 1890-1925: – Ֆրեզնո, 1930:
9. «Ազգ» պարբերական: 1921 թ.:
10. «Ապագայ» պարբերական: 1921 թ.:
11. «Վան-Տոսպ» պարբերական: 1917 թ.:
12. «Նոր Կեանք» պարբերական: - Ֆրեզնո: 1919 թ.:
13. «Հայաստանի Ձայն» պարբերական: 1919 թ.:

Сдана/Հանձնվել է՝ 27.11.2023  
 Рецензирована/Գրախոսվել է՝ 01.12.2023  
 Принята/Ընդունվել է՝ 08.12.2023